ՆՈՐՄԱԼ ՄԱՐԴԻԿ

Bookmark

Sally Rooney

NORMAL PEOPLE

A NOVEL

Bookmark

Սալի Ռունի

Ն Ո Ր Մ Ա Լ Մ Ա Ր Դ Ի Կ

ՎԵՊ

Թարգմանությունն անգլերենից՝
Աստղիկ Սարգսյանի

Bookmark

new mag

ԵՐԵՎԱՆ
2021

ՀՏԴ 821.111(417)–31 Ռունի
ԳՄԴ 84(4Իռ)–44
Ռ 912

Ռունի Սալի
Ռ 912 Նորմալ մարդիկ: Վեպ/ Սալի Ռունի; Թարգմանությունն անգլերենից՝ Աստղիկ Սարգսյանի.– Եր.: Newmag, 2021.– 320 էջ:

Քոնելն ու Մարիաննան մեծացել են միևնույն փոքր, պրովինցիալ քաղաքում, բայց նմանությունները դրանով ավարտվում են: Դպրոցում Քոնելը հայտնի է ու սիրված, իսկ Մարիաննան միայնակ է: Բայց երբ նրանք մի անգամ զրույցի են բռնվում, նրանց կյանքը մեկեն փոխվում է:

Մի տարի անց երկուսն էլ Դուբլինում են, Թրինիթի քոլեջում: Մարիաննան մտնում է նոր սոցիալական միջավայր, մինչդեռ Քոնելը երկչոտ ու անվճռական պատանու պես երկրորդական դերում է: Համալսարանում Մարիաննան ու Քոնելը երբեմն միասին են, բայց հաճախ՝ ուրիշներով տարված: Նրանք մագնիսի պես ձգում են միմյանց, քանի որ անդիմադրելի կապվածություն են զգում: Սակայն Մարիաննան ոտք է դնում ինքնակործանման արահետ, Քոնելն էլ սկսում է կյանքի իմաստը փնտրել իր կարիերայում: Ե՛վ Մարիաննան, և՛ Քոնելը պետք է առանձին-առանձին որոշեն, թե իրենց կյանքում ի՞նչը պետք է զոհաբերեն հանուն սիրելի էակի:

18+ ***Զգուշացում ծնողներին.*** *գրքում կան սեռական բնույթի արտահայտություններ և սեռական ակտի նկարագրություններ:*

ՀՏԴ 821.111(417)–31 Ռունի
ԳՄԴ 84(4Իռ)–44

ISBN 978-9939-884-17-2
NORMAL PEOPLE Copyright © Sally Rooney, 2018 All rights reserved
Armenian Translation © 2021 by Newmag Publishing House
Սալի Ռունի, «Նորմալ մարդիկ» © 2021, «Նյու Մեգ» ՍՊԸ

Այս գրքի հայերեն թարգմանության և հրատարակության իրավունքները պատկանում են «Նյու Մեգ» ՍՊԸ-ին: Իրավունքները ձեռք են բերվել Ուայլի գործակալության (The Wylie Agency Ltd) հետ կնքված պայմանագրով:

LITERATURE IRELAND

Promoting and Translating Irish Writing

The book was published with
the support of Literature Ireland

Գիրքը հրատարակվել է
«Իռլանդիայի գրականություն» կազմակերպության
աջակցությամբ

Bookmark

www.literatureireland.com

Բովանդակություն

Հունվար, 2011 11

Երեք շաբաթ անց (ՓԵՏՐՎԱՐ, 2011) 20

Մեկ ամիս անց (ՄԱՐՏ, 2011) 33

Վեց շաբաթ անց (ԱՊՐԻԼ, 2011) 43

Երկու օր անց (ԱՊՐԻԼ, 2011) 61

Չորս ամիս անց (ՕԳՈՍՏՈՍ, 2011) 76

Երեք ամիս անց (ՆՈՅԵՄԲԵՐ, 2011) 85

Երեք ամիս անց (ՓԵՏՐՎԱՐ, 2012) 104

Երկու ամիս անց (ԱՊՐԻԼ, 2012) 118

Երեք ամիս անց (ՀՈՒԼԻՍ, 2012) 135

Վեց շաբաթ անց (ՍԵՊՏԵՄԲԵՐ, 2012) 150

Չորս ամիս անց (ՀՈՒՆՎԱՐ, 2013) 168

Վեց ամիս անց (ՀՈՒԼԻՍ, 2013) 187

Հինգ ամիս անց (ԴԵԿՏԵՄԲԵՐ, 2013) 224

Երեք ամիս անց (ՄԱՐՏ, 2014) 241

Չորս ամիս անց (ՀՈՒԼԻՍ, 2014) 266

Հինգ րոպե անց (ՀՈՒԼԻՍ, 2014) 288

Յոթ ամիս անց (ՓԵՏՐՎԱՐ, 2015) 302

Երախտագիտության խոսք 317

Bookmark

Հոգեկան հավասարակշռության խաթարման առեղծվածներից մեկն էլ ընդունված է կոչել փոխակերպում: Այն ո՛չ երկրային հայտնությամբ է տրվում, ո՛չ էլ երկնային: Բայց մի օր հայտնվում է երևելի մեկն ու այնպես է դյութում մեզ, որ հլու-հնազանդ ենթարկվում ենք նրան:

Ջորջ Էլիոթ, *Դանիել Դերոնդա*

Bookmark

Հունվար, 2011

Քոնելը զանգը տալիս է, Մարիաննան բացում է դուռը: Դպրոցական համազգեստով է, միայն սվիտերն է հանել, վերնաշապիկն ու շրջազգեստը հագին են, ու բոբիկ է, միայն զուգագուլպայով:

Ըը, բարև, ասում է Քոնելը:

Ներս արի:

Մարիաննան շրջվում է ու քայլում միջանցքով: Քոնելը դուռը հետևից փակում է ու հետևում նրան: Մի քանի քայլ այն կողմ խոհանոցն է: Քոնելի մայրը՝ Լորեյնը, հանում է ռետինե ձեռնոցները: Մարիաննան ցատկում-նստում է սեղանին ու վերցնում շոկոլադի բանկան, որի մեջ թեյի գդալ է թողել:

Մարիաննան ասաց, որ ստուգողականների գնահատականներն արդեն ստացել եք, ասում է Լորեյնը:

Հա, անգլերենն իմացանք, ասում է Քոնելը: Դրանք առանձին են տալիս: Դե ինչ, գնա՞նք:

Լորեյնը կոկիկ ծալում է ռետինե ձեռնոցներն ու դնում լվացարանի տակ: Հետո մազերից հանում է սեղմակները: Քոնելը մտածում է, որ դա կարելի էր նաև մեքենայի մեջ անել:

Իմացա, որ շատ լավ ես հանձնել, ասում է Լորեյնը:

Դասարանում ամենալավը, ասում է Մարիաննան:

Դե, հա, համաձայնում է Քոնելը: Մարիաննան էլ վատ չի հանձնել: Գնացի՞նք:

Լորեյնն անշտապ արձակում է գոգնոցը:

Ես չգիտեի, որ շտապում ենք, ասում է նա:

Քոնելը ձեռքերը խոթում է գրպաններն ու զսպում իրեն, որ նյարդայնացած հոգոց չհանի, բայց դա անում է խորը շունչ քաշելով: Ու էլի ստացվում է՝ հոգոց հանեց:

Պիտի բարձրանամ ու սպիտակեղենը հանեմ չորանոցից, ասում է Լորեյնը: Հետո կարող ենք գնալ, լմ՛վ:

Քոնելը չի պատասխանում, միայն գլուխն է կախում: Լորեյնը դուրս է գալիս սենյակից:

Կուզե՞ս, հարցնում է Մարիաննան:

Նա շոկոլադի բանկան մեկնում է Քոնելին: Քոնելը ձեռքերն ավելի խորն է խոթում գրպանները, ասես ուզում է ամբողջ մարմինը թաքցնել գրպաններում:

Չէ, չեմ ուզում, ասում է:

Ֆրանսերենի գնահատականդ իմացմ՛ր այսօր:

Երեկ իմացա:

Մեջքը հենում է սառնարանին ու նայում, թե ինչպես է Մարիաննան լպստում գդալը: Դպրոցում Քոնելն ու Մարիաննան ձևացնում են, թե միմյանց չեն ճանաչում: Բոլորը գիտեն, որ Մարիաննան սպիտակ առանձնատանն է ապրում, որը մեքենայի համար ստորգետնյա անցուղի ունի, ու որ Քոնելի մայրը հավաքարար է, բայց չգիտեն, որ այս երկու փաստն առնչվում են իրար:

Ես գերազանց եմ ստացել, ասում է Քոնելը: Գերմաներենից ի՞նչ ես ստացել:

Գերազանց, կրկնում է Մարիաննան: Ի՞նչ է, գլ՛ուխ ես գովում:

Դու 600 միավոր կհավաքես, չէ՞*:

---

* Իռլանդիայում բուհ ընդունվում են դպրոցի ավարտական քննություններով: Ամենաբարձր միավորը 625-ն է: (Ծանոթագրությունները՝ **new**mag-ի):

Մարիաննան ուսերն է թոթվում: Դե, դու երևի կհավաքես էդքան, ասում է:

Դե, դու ավելի խելացի ես, քան ես:

Վատ մի՛ զգա: Ես բոլորից էլ խելացի եմ:

Մարիաննան լայն ժպտում է: Նա անթաքույց արհամարհում է բոլոր դպրոցականներին: Ընկերներ չունի ու դասամիջոց-ներին միայնակ գիրք է կարդում: Շատերն ատում են նրան: 13 տարեկան էր, երբ հայրը մահացավ: Քոնելի ականջին հասել է, որ այժմ տառապում է հոգեկան ինչ-որ հիվանդությամբ: Նա իսկապես դպրոցում ամենախելացին է: Եվ Քոնելը սար-սափում է Մարիաննայի հետ այսպես մենակ մնալուց, բայց նաև իրեն բռնում է այն մտքի վրա, որ շարունակ պատկե-րացնում է, թե տպավորություն գործելու համար ինչեր կարող էր ասել:

Անգլերենից ամենաուժեղը դու չես դասարանում, նկատում է Քոնելը:

Մարիաննան անհոգ լիզում է ատամները:

Գուցե հետս պարապե՞ս, Քոնե՛լ, ասում է նա:

Քոնելը զգում է, որ ականջները սկսում են վառվել: Գուցե Մարիաննան հենց այնպես է դա ասում ու ոչինչ չի ակնար-կում, բայց եթե ինչ-որ բան է ակնարկում, ապա իրեն այդ կապը միայն կվարկաբեկի, քանի որ բոլորն են զզվում Մա-րիաննայից: Նա հաստ ներբաններով տափակ կոշիկներ է հագնում և ընդհանրապես չի շպարվում: Ասում են՝ անգամ ոտքերը չի սափրում, էլ չասած, մնացածի մասին: Քոնելը լսել է, որ մի անգամ Մարիաննան դպրոցի ճաշարանում վերնա-շապիկին շոկոլադե պաղպաղակ է թափել, հետո գնացել է զուգարան ու լվացարանի մեջ լվացել այն: Այս պատմությունը

բոլորը գիտեն: Եթե Մարիաննայի խելքին փչի, կարող է դրպ-
ռոցում ցուցադրաբար բարևել Քոնելին: Կեսօրին կիանդի-
պենք, կասի այնպես, որ բոլորը լսեն: Քոնելն անախորժ դրու-
թյան մեջ կընկնի, իսկ Մարիաննան այդպիսի բաներից կար-
ծես հաճույք է ստանում: Բայց երբեք նման բան չի արել:

Միսս Նիրիի հետ ինչի՞ մասին էիր խոսում էսօր, ասում է Մարիաննան:

Եսիմ: Հեչ: Քննությունների:

Մարիաննան գդալը պտտում է բանկայի մեջ:

Ի՞նչ է, սիրահարվե՞լ է քեզ, ասում է Մարիաննան:

Քոնելը հետևում է գդալի շարժումներին: Ականջներն էլի վառվում են:

Ինչո՞ւ ես էդ հարցը տալիս, ասում է Քոնելը:

Աստված իմ, հո հետը չե՞ս հանդիպում:

Իհարկե, ոչ: Ու եթե հումոր էր, ծիծաղս չեկավ:

Կներես, ասում է Մարիաննան:

Նրա հայացքը քննախույզ է, ասես ոչ թե Քոնելի աչքերին է նայում, այլ աչքերի միջով՝ գլխի հետևի պատին:

Ճիշտ ես, ծիծաղելի չէ, ասում է: Կներես:

Քոնելը գլխով է անում, մի քիչ նայում շուրջն ու կոշիկի ծայ-
րով փորփրում սալահատիկների արանքը:

Երբեմն ինձ թվում է, թե նա իսկապես իրեն տարօրինակ է պահում ինձ հետ, ասում է Քոնելը: Բայց ուրիշներին չեմ ասի այդ մասին:

Ինձ թվում է, թե նա անգամ դասի ժամանակ է սիրաբանում քեզ հետ:

Իսկապե՞ս այդպես ես կարծում:

Մարիաննան գլխով է անում: Քոնելը քորում է ծոծրակը:

Միսս Նիրին տնտեսագիտություն է դասավանդում: Նրա հանդեպ Քոնելի ենթադրյալ զգացմունքները շատերն են դպրոցում քննարկում: Ոմանք նույնիսկ ասում են, որ Քոնելը Ֆեյսբուքով ընկերություն անելու առաջարկ է ուղարկել միսս Նիրիին, բայց դա ճիշտ չէ: Քոնելը երբեք դա չէր անի: Իրականում բան չի անում, ոչ էլ խոսում է հետը, այլ լուռ նստում է: Միսս Նիրին է ինչ-որ բան անում կամ իրեն խոսեցնում: Երբեմն դասից հետո պահում է Քոնելին, որ խոսի նրա ապագա անելիքների մասին, մի անգամ էլ նույնիսկ ձեռք տվեց նրա դպրոցական փողկապի հանգույցին: Քոնելը չի կարող սրա մասին պատմել, որովհետև կմտածեն, թե գլուխ է գովում: Դասարանում նրա ժամին շփոթմունքից ու նյարդայնությունից չի կարողանում կենտրոնանալ դասի վրա: Նստում է՝ հայացքը դասագրքին հառած, մինչև որ գծագրերը սկսում են լողալ աչքերի առաջ:

Ինձ անընդհատ ծաղրում են, իբր սիրահարվել եմ նրան, ասում է Քոնելը: Բայց հեչ էդպես չի: Ուզում եմ ասել՝ դու հո չե՞ս մտածում, որ ես նրան տոն եմ տալիս:

Ես չեմ նկատել:

Քոնելն առանց մտածելու ափերը քսում է դպրոցական վերնաշապիկին: Բոլորն այնքան վստահ են, որ միսս Նիրին ձգում է իրեն, որ ինքն էլ է սկսում կասկածել իր զգացածին: Իսկ ի՞նչ, եթե ինչ-որ մակարդակի վրա, սեփական ընկալման շեմից վեր կամ ներքև, ինքն իսկապես ցանկանում է նրան: Իրականում լավ չի պատկերացնում, թե ցանկությունն ինչ է: Ամեն անգամ, երբ մեկի հետ անկողնում է հայտնվել, այնքան է տանջվել, որ հաճույք չի էլ ստացել: Ու սկսել է մտածել, թե իր հետ ինչ-որ բան այն չէ, կանանց հետ ինտիմ հարաբե-